Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01 հոկտեմբերի 2019թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Ալեյանը, Կ. Սարգսյանը և Ս. Միրոյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ՝ Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերում ջրաչափական սարքավորումների տեղադրման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Մոդուլ>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Վ. Օհանջանյանը և նշեց, որ գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ուսումնասիրվել են հրավերով պահանջվող որակավորման չափանիշների վերաբերյալ <<Մոդուլ>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի առաջին տեղ զբաղեցրած <<Մոդուլ>> ՍՊ ընկերության վերաբերյալ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցումը ներկայացվել է 16.09.2019 թվականին:

17.09.2019 թվականին ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը:

Հիմք ընդունելով մասնակից <<Մոդուլ>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքները և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/4-Ն ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել <<Մոդուլ>> ՍՊ ընկերությանը,
2. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին,

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում,

4. Չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակից <<Մոդուլ>> ՍՊ ընկերությանը պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Վ. Օհանջանյան

_____ Կ. Ալեյան

Անդամներ _____ Ս. Միրոյան

_____ Կ. Սարգսյան

Քարտուղար _____ Ա. Սարգսյան